Հայաստան, ք. Երևան 0002, Տիգրան Մեծի 4
4 Tigran Mets str., Yerevan 0002, Armenia
+374 60 460405
Info@ekeng.am
www.ekeng.am

# Էլեկտրոնային ստորագրության eSignEkeng ծրագրի տեղադրումը և կիրառումը

# Բովանդակություն

**1. Ներածություն ........................................................- 3 -**

**2. EsignEkeng ծրագրի տեղադրման նախապայմանները և տեխնիկական պահանջները ...........- 4 -**

**3. Microsoft Word և Microsoft Excel փաստաթղթերի ստորագրումը eSignEkeng ծրագրով ..........- 8 -**

**4. Հարցեր........................................................- 9 -**

# 1.Ներածություն

Սույն ձեռնարկը նկարագրում է ***eSignEkeng*** ծրագրի տեղադրումը **Microsoft Office Word և Excel** էլ. փաստաթղթերում նույնականացման քարտի էլեկտրոնային հավաստագրի միջոցով ստորագրման եղանակը:

Ծրագիրը հնարավորություն է տալիս ստուգել նույնականացման քարտի էլեկտրոնային հավաստագրի վավերականությունը՝ դիմելով հավաստագրման կենտրոնի OCSP սերվերին, և ստեղծել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլ. փաստաթուղթ ( տես. «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» օրենքը):

Ծրագիրը հնարավորություն է ընձեռում նաև փաստաթղթի վրա ավտոմատ կերպով արտահանել ստորագրության գրաֆիկական այն տեսքը, որը հաստատված է նույնականացման քարտի վրա (Տես՝ նկարը):



# 2. EsignEkeng ծրագրի տեղադրման նախապայմանները և տեխնիկական պահանջները

Ծրագիրը կիրառելու համար անհրաժեշտ է համակարգչում նախապես ներբեռնել ու տեղակայել **Cryptocard Suite Manager** ծրագիրը և **«ԷԿԵՆԳ»-ի հավաստագրերը**, որոնք տեղադրված են www.ekeng.am -> էլեկտրոնային ստորագրություն-> Կիրառվող ծրագրեր բաժնում՝ **http://www.ekeng.am/hy/howtouse:**

*Cryptocard Suite Manager*-ի տեղադրման համար հարկավոր է ստուգել տվյալ համակարգչի **Windows** օպերացիոն համակարգը.

*Windows 32* բիթի դեպքում պետք է տեղադրել *CryptoCard Suite Manager 32* բիթ տարբերակը:

*Windows 64* բիթ տարբերակի դեպքում անհրաժեշտ է տեղադրել *CryptoCard Suite Manager 32* բիթ, այնուհետև՝ *64* տարբերակը*:*

Նույնականացման քարտի էլ.ստորագրության կիրառման համար անհրաժեշտ է ունենալ **USB Card Reader** սարք, որը միանում է համակարգչին **USB 2.0** պորտով:

- Նույնականացման քարտի առաջին իսկ օգտագործման ժամանակ անհրաժեշտ է ակտիվացնել **PIN** կոդը:
- **PIN** կոդը ակտիվացնելու համար անհրաժեշտ է միացնել ընթերցող սարքը, տեղադրել նույնականացման քարտը, բացել **CryptoCard Suite Manager** ծրագիրը, նշել **ARMID (AuthPIN)** և սեղմել **Activate** կոճակը (Տես՝ նկարը):




- ***<u>Ուշադրություն.</u>*** Նույնականացման քարտի **PIN** կոդն ակտիվացնելիս **3** սխալի դեպքում քարտի հավաստագիրը համարվում է անվավեր (***Տես*** ՝ *<u>Էլեկտրոնային Ստորագրության Ուղեցույց 2.2</u>*):

Տեղեկացնում ենք, որ ***eSignEkeng*** ծրագիրն աշխատում է հետևյալ օպերացիոն համակարգերի և ծրագրերի հետ.

Microsoft Windows 7SP1, 8, 10 (32bit, 64bit)
Microsoft Office 2010, 2013, 2016 (32bit)

Ծրագիրն օգտագործում է Microsoft .NET Framework 4.6.1 և բարձր ծրագրային փաթեթը: Դրա բացակայության դեպքում այն կառաջարկվի ներբեռնել Microsoft-ի պաշտոնական կայքից, այն է՝ **Microsoft .NET Framework 4.6.1**

***eSignEkeng*** ծրագրի կիրառման համար անհրաժեշտ է ունենալ ակտիվ թվային էլեկտրոնային ստորագրություն:

**eSignEkeng** ծրագիրը համակարգչից հեռացնելու անհրաժեշտության դեպքում պետք է այն ջնջել Control Panel \ Programs and Features հատվածից, ինչպես նաև C:\Users\username\AppData\Local\Apps\2.0 ֆոլդերից մաքրել eSignEkeng ծրագրի հետ

***eSignEkeng ծրագիրը Microsoft Word և Microsoft Excel փաստաթղթերում տեղադրելու համար պետք է.***

- **www.ekeng.am** կայքից ներբեռնել **eSignEkeng** հավաստագիրը և տեղադրել **Trusted Root Certification Authorities**-ում: Անհրաժեշտ է բացել ֆայլը և համապատասխան պատուհանում սեղմել next(***Տես՝ նկարը)***




Բացված պատուհաններում next կոճակը սեղմելուց հետո անհրաժեշտ է ընտրել «Place all the certificates in the following store» կետը և browse կոճակը սեղմելով ընտրել «Trusted Root Certification Authorities» դաշտը (***Տես՝ նկարը***):




Կրկին, next կոճակով առաջնորդվելով, սեղմում ենք finish կոճակը: Հավաստագիրը (սերտիֆիկատը) տեղադրված է (***Տես՝ նկարը***):



**EsignEkeng ծրագրի  տեղադրման  քայլերն են.**

Word և Excel փաստաթղթեր ստորագրելու համար ծրագիրն անհրաժեշտ է ներբեռնել www.ekeng.am -> էլ. Ստորագրություն->կիրառվող ծրագրեր ենթաբաժնից, որից հետո սեղմել setup ֆայլի վրա.

- **eSignEkeng ծրագիրը Microsoft Word համար**
- **eSignEkeng ծրագիրը Microsoft Excel համար**

Բացվում է պատուհան  Install և Don’t Install դաշտերով, որտեղ անհրաժեշտ է սեղմել Install կոճակը և տեղադրել:




Ծրագրի ներբեռնումից հետո word և excel փաստաթղթում հայտնվում է **ID card** կոճակը:

## 3.Microsoft Word և Microsoft Exel փաստաթղթերի ստորագրումը eSignEkeng ծրագրով

Նույնականացման քարտը կարդացող սարքի մեջ տեղադրելուց հետո անհրաժեշտ է բացել փաստաթուղթը(word կամ excel) և **ID card** մենյուից սեղմել **Signature** կոճակը:

Բացվում է **Pin** կոդի պատուհանը, որտեղ պետք է մուտքագրել ID քարտի գաղտնաբառը և սեղմել **ok** կոճակը: Հաջորդիվ ավտոմատ կերպով տեղադրվում է օգտատիրոջ հավաստագրված ստորագրությունը, եթե այն ակտիվ է (*Տես՝ նկարը*):




***Ուշադրություն: Ծրագրերը դեռ գտնվում են մշակման փուլում, ուստի հորդորում ենք հետևողական լինել ekeng.am կայքի թարմացումներին:***

## 4.Խնդիրներ

1. **Ինչու՞ MS Office 2007 փաթեթի դեպքում eSign EKENG ծրագրով չի ստացվում ստորագրել:**

   eSign EKENG ծրագիրը աշխատում է միայն MS Office 10.13.16 փաթեթների 32 bit տարբերակների հետ:

2. **Հնարավո՞ր է ESign EKENG ծրագիրը կիրառել նաև Excel ֆայլերում:**

   - *eSign EKENG ծրագիրը Ms Office Excel ֆայլերում կիրառելու համար անհրաժեշտ է ներբեռնել* **eSignEkeng ծրագիրը Microsoft Excel համար:**

3. **Հնարավո՞ր է արդյոք word փաստաթղթում հաստատել երկու անձանց ստորագրություններ***:*

   *Word փաստաթղթում երկու անձանց էլ. ստորագրությունների կիրառումը eSign EKENG ծրագրի միջոցով հնարավոր չէ :*

4. **Հնարավո՞ր է արդյոք ստորագրել միաժամանակ word-ի մի քանի էջերում:**

***eSign EKENG*** *ծրագրի միջոցով հնարավոր չէ ստորագրել word փաստաթղթի մեկից ավելի էջերում:*

5. **Հնարավո՞ր է արդյոք փոփոխել ստորագրության ձևը և բովանդակությունը ստորագրված word փաստաթղթում:**

   *eSign EKENG ծրագրի միջոցով ստորագրված փաստաթղթում հնարավոր չէ փոքրացնել ստորագրության չափսերը կամ տեղափոխել:*

6. **Ինչու՞ եմ ստանում** ***Connection Error, Enable to Connect. .Timeout_*****հաղորդագրությունը:**

   *ID Signature կոճակը սեղմելիս գործընթացը երկարում է ինտերնետ կապի տատանման հետևանքով:*

7. **Ինչու՞ է վավեր ստորագրված փաստաթուղթը այլ համակարգչում անվավեր երևում:**

   *Քանի որ* ***eSignEkeng*** *ծրագիրը համատեղելի չէ* ***MS Office 2007*** *(Տես. կետ 2) տարբերակի հետ, ապա ավելի բարձր office –ով ստորագրված փաստաթուղթը 2007-ով բացելիս անվավեր է երևում:*